



ՕՐԱԳԻՐ ԶՄԻՌՆԻԱՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ՀԱՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԶՄԻՌՆԻԱ ՈՒՐԲԱԹ 16 ՅՈՒՆԻՍԻ 1854

ԹԻՒ 472

ԶՄԻՌՆԻԱ, 16 ՅՈՒՆԻՍԻ

Հասան Զաքար փաշային հրամանատարութեամբ կայսերական զօրքերը Ղէօրձովայի (Կերկեր) մաս, Ռուսաց հետ սաստիկ պատերազմեցան և յաղթող հանդիսացան:

Ռուսաց զօրաց բանակին ընդհանուր հրամանատար Հասան Զաքար փաշային և Սիլվիսթրի ընդհանուր կառավարիչ Սայիտ փաշային այս պատերազմին վրայօք տուած պաշտօնական ծանօթութիւնը, որ ի 9 յուլիսի և նոյն ամսոյ 11ին ի կոստանդնուպոլիս ստացան:

Ռուսաց զօրաց բանակին ընդհանուր հրամանատար Հասան Զաքար փաշային և Սիլվիսթրի ընդհանուր կառավարիչ Սայիտ փաշային այս պատերազմին վրայօք տուած պաշտօնական ծանօթութիւնը, որ ի 9 յուլիսի և նոյն ամսոյ 11ին ի կոստանդնուպոլիս ստացան:

Իրարմարդոյն Ռուսը հետեւեալ պաշտօնական

նամակը ընկալաւ երէկ, սպարապետ Իօմէր փաշային յուլիս 11 թուով, որ մասնաւոր տեղեկութիւններ կուտայ, վերջոյն յաղթութիւն ետքը պատահած դէպքերուն վրայով:

Ռուսաց զօրաց բանակին հրամանատար Հասան Զաքար փաշային առած նամակներս կը ծանուցանեն, թէ օսմանեան զօրաց ի Բամա ըրած յաղթութենէն ետքը Ռուսերը ետ քաշուեցան: Սպարապետի և Ղէօրձովայի պատերազմին հետեւեալ գիշերը զօրապետ Ալի փաշան խրկուեցաւ բաւական զօրքով որ երթայ տիրապետէ վերայիշեալ քաղաքները, ուր հաղու թէ մտան օսմանցիք՝ իսկոյն կայսերական դրոշակը կանգնելով 21 թիւանթ առձակեցին ի նշան ռուսիսութեան:

Օրտապետը փութացաւ յիշեալ քաղաքաց բնակիչներուն վիճակը ապահովենու, որոնք շատ երախտագէտ եղան, և այնուհետեւ այս դիրքերը զօրացնել սկսան:

Սպարապետին առած վերջի տեղեկութիւնները Բամայի պատերազմին վրայօք, մեծ պատիւ կրենէ կայսերական զօրաց, որոնք սաստիկ քաջութեամբ պատերազմելով, թշնամիին կորուստը 7000 հոգիէն աւելի է: Վերադարձաներուն թիւը խիստ շատ է:

Կարսի և Կարնոյ թղթատարը որ յուլիսի 6ին հասաւ ի Տրապիզոն, Վաղարշի օսմանցոց առաջապահ զօրաց, Ռուսիոյ առաջապահ զօրաց հետ եղած կռիւը կը հաստատէ: Բայց Ռուսը աւելի քիչ կորուստ ըրած են, քան որչափ լոււսած էր:

Կարսի նամակները կը ծանուցանեն թէ յուլիս 2ին յայտնաւ կարծուեցաւ թէ պատերազմ մը ըլլալու է: Վասնզի Ալեքսանդրօօրի Ռուսաց զօրքը բանակը թողուցեր և դէպ ի Կարս կը քալէր: Բայց այս կարծիքը չուսով ի գերեւելաւ: Երէք ժամէն ետքը Ռուսը դէպ ի Կիւմրիի տակի բանակը գացին և դարձեալ իրենց վրանները մտան:

Երկու օր առաջ, Իսմայիլ փաշային հրամա-

նատարութեամբ անկանոն զօրքերը գունդ մը խաղաղներու վրայ սաստիկութեամբ յարձակեցան և շատ մարդ անոնցմէ ուղաններէն ետքը 60 ձի առին և Կարսի բանակը բերին:

Կարսի զօրքը շատ աղէկ վիճակի մէջ է: Մեծ եռանդ ունին թշնամիին վրայ քայլել ու վրէժ առնուլ անցեալ տարուան դէպքերէն 1ին եղած դէպքէն: Բայց մինչև հիմա գլխաւոր զօրապետը ձանձրանալով զօրաց մէջ գտնուող պաշտօնակալաց անմիաբանութենէն, որոնց մէկ մասը Լարոպացի են, որոշում մը չըրաւ:

Երէկ 3 օսմանեան շոգեշարժ ֆուէկաթ 4000 կանոնաւոր զօրքով Վառնայէն եկան մեր նաւահանգիստը խարխիս նետեցին: Որոնք Չիւրիւք սուլի Սէլիմ փաշային բանակը զօրացրենք և կերթան:

Մագլիոյ և Կաղղիոյ 3 շոգեշարժ ֆուէկաթ նմանապէս 4000 կանոնաւոր զօրքով ասկէ անցան գնացին ի Չիւրիւք սու:

Հաջորդ փաշան մեր նոր կառավարիչը: Պէտք անուն պտուտակաւոր շոգեշարժով այսօր հասաւ, և արժանաւոր պատուով ընդունուեցաւ:

Մեր նախորդ կառավարիչ Իսմէթ փաշան Վաստիական շոգեշարժով այսօր մեկնեցաւ ի կոստանդնուպոլիս երթալու, ուսկից թիւրքաւ պիտի երթայ իւր նոր պաշտօնը վարելու:

Սոքում գալէն և Ռէտուլ գալէն նոր լուր մը չունիմք: աս ետքի նաւահանգիստը միայն անգղիական շոգեշարժ մը կայ առայժմ:

Վառնայէն յուլիսի 12ին կը գրեն թէ 7 օսմանեան շոգեշարժ ֆուէկաթ և քորովթ, նըմանապէս 2 ուրիշ շոգեշարժեր նիզակակից տէրութեանց, 10,000 հոգիի չափ զօրք առին Վառնայէն Չիւրիւք սու տանելու համար: Օրքերը դուրս հանելէն ետքը, օսմանեան այս փոքր նաւատորմը, հրամանատարութեամբ երկրորդ ծովապետ Ահմէտ փաշային Չէրքէզի կողմերը պիտի պահպանէ մինչև նոր հրաման ընդունելը:

Բուսէլի կայսերական բանակին սպարապետ Իօմէր փաշան ամսոյս 12ին Շուվալայէն իր բանակը Ռուսաձուք փոխադրեց: Վառնայի վերջի

ՔԱՂԱՔԱՔԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՆԶՐԵՒՈՏ ՕՐ

(Հարուստութիւն և վերջ:)(1)

«Տես տիկին յիպոն, ըսաւ թերեզան, որչափ տաղտկացուցիչ բան է երբոր հետեւեալ օրուան ալ չկրնար մէկը վտտահ ըլլալ: Երէկ կը յուսաւ յինք այս օրուան համար՝ որ մէկ գեղեցիկ օր մը պիտի ըլլայ: — Եւ այն անգամ մը, ալ աւելի գէշալու միայ չէ օդը: Գրաւ կը գնեմ որ դարձեալ պիտի ստիպուինք պտտելու երթալէն հըրաժարիլ: — Բայց ոչ, սիրելիս, բայց դիցուք թէ այսպէս ըլլայ, պէտք չէ որ բնաւ դժբաղդ համարիս գըքը: Դուն անանկ հանգիստ և զուարճալի սպարազաններու մէջ կը գտնուիս՝ որոնցմէ հազարաւոր ինդը ընտանիք բոլորովին զրկուած են: (Նձրեկին և գէշ օդին ժամանակը, սպահովութեան մէջ ես՝ մեծ և գեղեցիկ հիւրամեծար տան մէջ, ուր տեղ ընդարձակ սենեակներ կան որ կրնան անոնց մէջ ուղածիդ պէս խաղալ և զուարճանալ, գըքեր սրածուծապատանքներ և ամէն տեսակ գեղեցիկ խաղալիքներ ունիս և կրնաս զօրանուլ: աղատ ես դուն քու բոլոր կամքդ կատարելու, քու ակտիւակիդ համեմատ ընտիր կերակուրներ ուտելու, և բոլոր այս բա-

(1) Տես լրագրոյ 469-470 թիւերը:

ները ընել առանց փոքր աշխատութի մը կրելու: Թերեզան այս խոսքերը լսելով՝ չէր գիտեր ինչ պատասխան տայ: որովհետեւ աղէկ կը հասկընար թէ իրաւացի էին բոլոր ըսածները: Աւստի լռեց: և սեղան նստելով նախաճաշ ընելու համար, ալ ամենեւին իր սրտիկով թեր վրայով խօսք չսացաւ:

Նախաճաշէն ետքը, Սոփիան գնաց բերաւ իր բրդեղէն թելից կըծիկը առնադործութեան համար, և կանեփեայ կտուր որուն վրայ արդէն գեղեցիկ իրենակ մը սկսած էր: Թերեզան իր զարմանքը յուսուց այս գեղեցիկ ձեռագործը տեսնելուն, և բաղձանք մը ցուցուց սորվելու:

Եւ յիպոն տիկինը որ սորվեցուցեր էր Սոփիային այս տեսակ առնադործութիւնը, ուղեց սորվելու նաեւ անոր հօրեղօր դստերը: Թերեզան հաւանեցաւ անոր առաջարկութեանը հաճութեամբ սրտի: և Սոփիան գնաց բերաւ ամէն հարկաւոր եղած բաները, և անիկա անմիջապէս սկսաւ գործել:

Բայց թերեզան երբէք սովորեալ չէր տանկ ծանր և շարունակ աշխատութեան մը: մանաւանդ որ իւր ծնողքը դատարկութեան մէջ մեծ ցուցներ էին զինքը: սակայն որովհետեւ հարկաւոր էր որեւիցէ եղանակաւ ժամանակ անցուներ՝ ակամայ յանձնառու եղաւ աշխատելու, և քիչ շատ օգուտ քաղելով յիպոն տիկինը դա-

սերէն կըցաւ լմնցնել այս առաւօտ մէկ ծաղիկ մը որ բաւական դժուար էր:

Այս յաջողութեանը վրայ հաճութիւն և սնու փառութիւն մը դգալով թերեզան բոլորովին մոռցաւ անձրեւը, և իր աշխատութիւնը կը շարունակէր այնպիսի եռանդեամբ, որ յիպոն ալ կինը ստիպուեցաւ ըսել իրեն որ զգուշութե փարուի, չըլլայ որ ձանձրանայ միեւնոյն բանի վրայ երկար առէն աշխատելով՝ ինչպէս որ շատ անգամ կը պատահի: Թէ պէտք է գիտնալ փոփախութիւն մը ընել զբաղանոց: և իսկոյն խել մը գըքեր գնելով անոր առջեւ եղած սեղանին վրայ յորդորեց որ գիք մը ընտրէ և կարգայ, ասանկ ըսելով: «Երբոր կարգալէն յոգնիս՝ ան ատենը ալ աւելի սիրով առնադործութե կը պարապիս և ժամանակը արագութեամբ անցած պիտի երեւայ քեզի»:

Առաջին գիրքը որ թերեզային ձեռքին եկաւ, համառօտ և խիստ օգտակար նկարագրութիւն մը կը պարունակէր աշխարհիս ամէն կողմերուն վրայով: Նախ սկսաւ յօժարութեամբ աչքէ անցնել դան: և որովհետեւ շատ աղէկ կը կարգար, յանձնառու եղաւ բարձր ձայնով կարգալ: և որչափ առաջ կըրթար այնչափ աւելի հաճութիւն մը կը զգար այս գրքէն, անանկ որ մոռցաւ իր առնադործութիւնը՝ ինչպէս որ մոռցեր էր օգին գեղութիւնը:

նամակները կրճատուցանեն՝ թէ անկէ Ղեործօվս անցեր է ինքը, Աստուրիոյ զօրապետներուն հետ խօսակցելու համար :

— Վէնայի օսմանեան դեսպանութեան խորհրդական Սատրք պէյը (Ս. Սթենտիլ) Հոռմլայէն անցեալ հինգշաբթի հասաւ ի Վոտտան գնուպօլիս, և երկուշաբթի թրեքտու ճանապարհաւ մեկնեցաւ իր պաշտօնին երթալու, պաշտօնական նամակներով առ օսմանեան դեսպանին : Սատրք պէյը Վէնայէն ի Հոռմլայ Աստուրիոյ գնդապետ Քալքթին ուղեկից եղաւ, որ իր կառավարութենէն պաշտօնական գիրեր բերաւ : Իսկ քիչ քիչ, Սթենտիլ, և լորտ Սթալիան սպարապետաց : որ կրկարծուի զօրաց բանակներուն գործողութեանց կարգադրութեանց համար ըլլայ :

— Կերեւի թէ Ռուսիոյ դեսպան Ս. Կար Սալէնտորֆը անշուշտ Վէնայէն մեկնելու է : Վասնզի իր կազ կարասիքը ծախել տուաւ, և թէ իր տեղը ոչ թէ Կորչաքոֆ իշխանը պիտի մնայ, որ պարզապէս արտաքին կարգի պաշտօնով մը եկած է ի Վէնա, հաւանականաբար Ռուսիոյ դահլճին պատասխանով, այլ Վէնայի դեսպանութեան խորհրդական Ս. Կար Ֆոնդոնը, լիակատար իշխանութիւն ունեցող պաշտօնէի տիրութեամբ :

— Աստուրիոյ ծանուցագրոյն, Ռուսիոյ տուած պատասխանը՝ ըստ Ռուսիոյ ի նշանակելի առաջնահաշի օրագրոյն, այս է :

— Ռուսիան կրնաւոր թրեքտուից պաշտպալ նուիրելը, ինչպէս որ չորս մեծ տէրութիւններէն ընդունուած է Վէնայի արձանագրութեան մէջ : ինքը կրպարտաւորի օսմանեան սահմանները պարպելու, թէ որ արեւմտեան տէրութիւնները կրթողուն իրենց կողմանէ օսմանեան երկիրները : և եթէ Աստուրիան ամենեւին չմտնէր ի թիւրքաստան : Ռուսիան ռազմագիտութեան պատճառաւ, Ստրէզի գիծը գրաւած է : Ռուսիան պատրաստ է հաշտութեան գործարարութեան մէջ մտնելու և խօսելու, թէ որ երաշխաւորութիւն կուտան իրեն : որ այն միջոցին ամենեւին իրեն գէտ յարձակում ըլլալու չէ :

— Վարսնեալ նաւատորմայիները միշտ ի Պալլաք կը գտնուին, հաւանական է որ մինչև նաւարանին մէջ այժմեան զանազան աշխատութեանց կատարուելը հոն կենան : և Պէյքօզի գաշնակից տէրութեանց բեռ կող նաւերը յիշեալ նիւթական բաները փոխադրեն, ուր որ հարկը պահանջէ :

— Օրմապետ Տ'Ալիքանի գուրը, որ գաղղիացեաց բանակին ամենէն երկտասարդ զօրապետն էր, աղիւսական և քաջ պաշտօնատար ներէն մէկը և հաշակաւոր մարաշխա Նէյին երկրորդ օրդին, մաղձայոյդէն մեռաւ ի Վելլպօլու : Իժբաղդ գիպուածով մը գաղղիական

օրագիրները ևս՝ նշանակած էին այս անգամ Վելլքանի գրաւակի և Սուքուլայի իշխանահայոյն մահը, որ յաւիտ շին մեռեր է ի Փարիզ :

— Ինչպէս գաղղիական շոգենաւը անցեալ շաբթու Սարսիլայէն գալով, 1000 գաղղիական զօրք և թնդանօթներ հանեց ի Վելլպօլու, որոնցմէ 4 հոգի մաղձայոյդէն մեռեր են ճամբան :

— Վելլ Գ. գաղղիական շոգենաւը նմանապէս Սարսիլայէն գալով 415 զօրք հանեց ի Վելլպօլու : ասոնցմէ ալ 2 հոգի մաղձայոյդէն մեռեր են ճամբան :

— Այս վերջի օրերս շատ մը գաղղիական բեռ կող նաւեր հասան ձիւր, ջորիներ, ալիւր, գարի, յարդ և այլն բեռնաւորած, գաղղիական բանակին համար : որոնք անմիջապէս քառասնորդական զգուշութիւնը կատարելէն ետքը Վաւնա պիտի տանին :

— Ինչպիսի կառավարութեան որոշմամբ, անգղիական բանակին հետեակ զօրաց գունդը որ 850 էր 1000 հոգի պիտի ըլլայ, այս աւելնալը երկրորդ և չորրորդ խմբերէն սկսան : որոնց համար 3705 հոգի Վնգիլայէն խրկեցին : միւս գնդերուն թիւերը աւելնալու պիտի սկսին, երբ որ առաջիններունը ըմբան :

— Երկու հեծեալազօրաց գնդեր Վնգիլայէն Երեւելք իրկուեցան, անգղիական բանակը զօրացնելու համար :

— Ինչպիսի պաշարման թնդանօթներ ամէն օր կը հասնին ի Վոտտանգնուպօլիս, ուսկից Սեօլ կը խրկուին :

— Ինչպիսի թիւերը շոգենաւէն գերի բռնուածները մայրաքաղաքը նաւարանը գտնուած Ռուս գերիներուն հետ փոխանակուելով այս օրերս ի Վոտտանգնուպօլիս հասան, որոնցմէ 7 հոգի Լոտտան իրկուեցան են, պատերազմական ատենանի մը մէջ դատուելու համար :

— Ինչպիսի զինուորական ճարտարապետութեան երեք հրամանատարք Ղեործօվայի պատերազմին մէջ գտնուելով որոնք Ռուսաց շատ մահաւորք եղաւ, իրենց քաջութեամբ և տաղանդներով օսմանեան զօրաց շատ օգտակար ըլլալն ետքը՝ զարնուեր մեռեր են :

— Օսմանեան Սեօլի Պալէի շոգենաւը Սեօլի գալով 80 Ռուս գերի բերաւ Ղեործօվայի վերջի պատերազմին բռնուած :

— Դերիանուպօլէն կը գրեն թէ 400 թնդանօթ մահի գաղղիացի և 100ի չափ հետեակ միջապառուած զօրքէն Վելլպօլուէն հոս եկան ձիւր ծախու առնելու համար :

Իարձրալոյն Ռուս գարձեալ չորս մեծ տէրութեանց փոխանորդներուն ծանուցագիր մը խրկեց որոնք Յունաց գործոյն կը վերաբերին :

Օսմանեան տէրութիւնը տեսնելով որ այժմեան Յունաց պաշտօնատարները աւելի աղէկ

ընթացք մը կրնան քան զառաջինն, և թէ հեղեկացեաց կը վերադառնան նաւատերները ու բընակիչները ապստամբութեան մասնակից չեն, արտօնութիւն կը ընդհատէ որ Յունաց նաւերը Հելլէնական գործակաւ իւր ծովերը և նաւահանգիստները նաւարկեն և վաճառականութիւն ընեն : աս պայմանաւ որ քաղաքական կառավարութեանը պիտի հնազանդին բոլոր իրենց գործոցը մէջ : Ի վերայ այս ամենայնի՝ այս հրամանը պայմանական և առժամանակեայ է :

Յուն նաստանի յանցանքը՝ նիւթապէս յայտնի եղած ըլլալով, երկու օմնուան մէջ կը պարտաւորին ընդհանուր հատուցում մը ընելու և ապագային համար օսմանցեաց երաշխաւորութիւն տալու : Թէ որ որոշուած ժամանակը զաննը չընէր, Յունաց նաւերուն շնորհուած արտօնութիւնները ետ կ'առնուին : Որովհետեւ Յունաց աւաղակներուն թիւերը և Վնգիլայի սահմանները արշաւելու պատճառաւ՝ արքունի գանձը գրեթէ բոլորովին իւր եկամուտները կորսնցուց և բնակիչները ապստամբներուն արշաւանքէն մեծ վնասներ կրեցին, ուրեմն Իարձրալոյն Ռուսաց այս փնտաւը հատուցում կուզէ, որուն համար քննութեան յանձնարարութիւն մը հաստատուեցաւ որ այս փնտաւներուն արժողութիւնը որոշեն :

Յիշեալ յանձնարարութիւնը, անգղիացի գաղղիացի, օսմանցի և յոյն չորս գործակալներէ կը բաղկանայ : օսմանեան գործակալը թարգմանութեան գրաստան անգամ ի իւրեքմէ պէյն է : որ անցեալ օր Վելլանիի շոգենաւով մեկնեցաւ նոյն կողմերը երթալու :

— Հետեալ յայտարարութեան թուղթը Ռուստ էֆէնտին Վալիքոսի և Թեոսաղիայ բնակչացը ուղղեց, որ արդարեւ գոյաբանութեան արժանի է :

Արշաւանք մը որուն օրինակը բարեկիրթ աղագաց պատմութեան մէջ չտեսնուիր, անկարգութիւնը սփռեց տարածեց այս երկու գեղեցիկ նահանգներուն մէջ Վալիքոսի և Թեոսաղիայ Սարսնութիւնը և աւարաւորութիւնը հեղեկացեաց աւաղակախմբին երեւման տուի նշանները եղան, որոնք կողոպտելու և յախշակելու նպատակաւ միայն այս կողմերը եկան : Յիշեալ հելլէնացիները որպէս մարդ՝ մարդկութեան օրէքները բռնաբարեցին : և որպէս բրիտանեայ օրբութիւն սրբոց տաճարները անգամալծեցին : բայց Վստուած կը պատժէ ամէն մեղքերը :

Վալիքոսի գաւառներուն գործողութեանը համար որոշուած կայսերական քաջ զօրքը, այն կողմերը հելլէնական աւաղակներէն ազատելէն և հանգստութիւնը վերահաստատելէն ետքը, Թեոսաղիա եկան, այս տեղի զօրաց հետ մեկտեղ գործելու և վերջացնելու ինչ որ արիաբար սկսուեցաւ իրենց քաջ ընկերակիցներէն :

Վալիքոսի անցքերը գիտէք ամենքդ ալ, մը անհաճոյ կերակայ մեղի անձրեւոտ օր մը մեր կողմերը, բայց գոնէ անտանելի բան մը չէ, կրնայ մարդ համբերել, բայց ի՞նչ պիտի ըսէիր օրիորդ, որ արգէն սիրտդ այնքան նեղացաւ երէկ և այսօր անձրեւ գալուն համար, ի՞նչ պիտի ըսէիր կըսեմ, երբ որ արեւմտեան Հնդկաստանը գտնուելու ըլլայի որ արեւը շատ անգամ հեղեղի պէս անձրեւ կուգայ ոչ մէկ կամ երկու օր՝ այլ տասնուհինգ օր շարունակ առանց երբեք դադարելու :

— Եւ ատ ինչ անտանելի բան է ըսին երկու օրիորդներն ալ մէկէն, փառք Վստուածայ որ մենք տալ Հնդկներէն աւելի երթանիկ եմք :

— Այսու ամենայնիւ դուն կըցաւելիր, Թեոսաղիա, և մեծ դժբաղդութիւն մը կը համարէիր որ անձրեւ արգելք եղաւ քեզի և չմոլուց որ ժուռ գալ իր թան, ինչպէս որ միտքդ գրած էիր : բայց տես որ բան մը չես կորսնցընիր, ոչքու բարեկեցութիւնդ և ոչ մէկ զրօսանքդ երբ որ ստիպեալ ես դուրս չելլել . . . : Եւ երէկ երէկ սիրելի զաւակներս, պատուահանին մօտեցէք որ տեսնէք սա դժբաղդ ծերունին, որ պարտաւորին վանդակին (բարմաղըք) կը թնամ կայներ է : աղէկ նայեցէք անոր : անկա իր ծերացած հասակէն և հիւանդութենէն կորացած չկրնար շիտակ կայնիլ և շատ դժուարութեամբ կրնայ աշխատիլ իր ապրուստը ճարելու համար : Այսու

Երբ որ հասաւ բարձր Նիւթաղի նկարագրութիւնը ուր կըսէր հեղինակը թէ այն տեղուանքը շատ քիչ անձրեւ կուգայ, ընթերցումը ընդհատելով՝ ըսաւ : «Եւ շատ կը ցանկայի բնակիչ այնպիսի երջանիկ երկրի մը մէջ ուր ամենեւին անձրեւ չի գար» :

— Կարգալը շարունակէ, օրիորդ, ըսաւ դուք ալ կը, գուցէ կարծիքդ պիտի փոխես : Թեոսաղիան շարունակեց և իմացաւ որ անձրեւներուն պակասութենէն՝ Նիւթաղի օդը իրիտ տաք է և հետեալ բնակիչները կը չիւնդան, և շատ անգամ աչաց տեսութիւններ կը կորսնցունեն անապատներէն հովերուն բերած բարակ աւաղներէն :

«Եւ, ստուգել ասիկա ստուգել բան է, աղաղակեց աղիւրը, և ինչպէս այս դժբաղդ բնակիչները կրնան ապրիլ առանց ջրոյ» :

— Կարգալ սիրելիս, որ հասկընաս պատասխանեց Սթենտին : Թեոսաղիան հնազանդեցաւ, և կարգաց որ մեծ գետ մը Նիւթաղի ըսուած, ամէն տարի ժամանակին՝ սաստիկ յորդութեամբ (թաշմա) կը ռոգէ երկիրը և պտղաբեր կընէ :

— Ի՞նչ օրհնութեան աղբիւր մը եղած պիտի ըլլայ այս գետը նոյն երկրին համար, այսու ամենայնիւ երբեք չեմ ուզեր ես Նիւթաղի բնակիլ :

— Եւ ի՞նչ գիտեմ թէ ի՞նչ պատճառաւ չես ախորժեք դուն հոն բնակելու, կրնեց Սթենտին տիկինը, բայց գուցէ Վալիքի և Երեւելք մէկ կողմը

աւելի հանգիստ կը ըլլայի, Կուրնեայի եզերքը, ուրտեղ տուտ ոսկի կը գտնուի, ուր բաւական տաք գաւառ մըն է, և տարուան որոշեալ մէկ ժամանակը միայն անձրեւ կուգայ :

— Այս ատոր շատ կը հաճիմ, աղաղակեց Թեոսաղիան :

— Համբերէ գուաւի, պատասխանեց Սթենտին տիկինը : պարտիս գիտնալ նաեւ որ այս հարուստ երկրին գիրքը այնքան ցած է, որ երբ որ անձրեւները կըսկսին գալ, բոլոր երկիրը ջրով կը ծածկեն, և անկէ յառաջ եկած շարունակ խոնաւութենէն անանկ տոկալի և տարափոխիկ հիւանդութիւններ կը պատահին որ տարուէ տարի հազարաւոր անձնք կը մեռնին :

— Ի՞նչ հոյ չի, ինչպէս մեր երկիրը, որ գետնիւ չի ցածեցուցնէ :

— Այս հոյքը ալ կան հոն, բայց ամենեւին առողջարար արդիւնք մը չունենալէն զատ՝ տհաճ զին կործանութիւններ կընեն : սաստիկ փոթորիկներ կը ընան որ աները կը բռնուեն, ծառերը արմատէն կը ընկնեն, և նաւերը կը խլկուեն :

— Թէ որ այսպէս է, անշուշտ հաճելի չըլլար ինձի : կը տեսնեմ որ աւելի աղէկ է մնալ մեր երկիրը, ուր այսպիսի բաներ չկան : և պատճառ չունինք գանգատելու : երբ որ մեր պարտեղները երբեմն ջրով կը ծածկուին :

— Երաւունք ունիս : Թեոսաղիա, թէ պէտք չի

մի խորհրդով անոր • Կրտսեր թէ, մտերմ պիտի մեկնի յիշեալ մարտի տարե • և առայժմ բարձրագոյն հրամանատարութիւնը գաղղիական բանակին • Կարգէսն իշխանին յանձնուեր է •

— Աղէքսանդրի վերջին շոգենաւը Եգիպտոսի ընդհանուր կուսակալ բարձրագոյնութիւնը Աղգաս փաշային մահուան տրամալի լուրը բերաւ, որ ամսոյս 2ին կաթուածով մը մեռեր է ի Վահրէ և որուն յաջորդերէ Սէհէմմէտ Ալի փաշային որդին բարձրագոյնութիւն Սալիտ փաշան •

— Ախիդայոյ կայսրը հրաման քեր է Կորչաքոֆ զորապետին, որ դառնայ Վալարիոյ տիրապետէ, նմանապէս Դանուբի շրջակայներուն •

— Մարաշիտ Բաթրէկի իշխանը, կայսրը աչքէն ձգեր և ի Ռոստոմա իր երկիրը քաշուելու դատապարտուի •

— Աստորիական երկրորդ և չորրորդ գնդերուն զինուոր հրամանատար Հէս զօրապետը Վառնա գոցեր է, մարաշիտ Սէնդ-Անճոյին և ուրիշ նիզակակից զօրապետաց հետ խորհելու •

— Աստորիական Արքայ շոգենաւը Դանուբէն իջած ժամանակը, Նիքոլաբոլի Ռուսաց զօրքերը հրապաններ պարպեր են վրան, որուն մէջ զօրապետ մըն ալ կայ եղեր, կրտսեր •

— Անճոյի վերջին գիւրերը կը ճանուցանեն թէ Աստորիոյ պատրաստութիւնը շատ մեծ է • Անգլոյին փոխառութիւն մը ստորագրուեր է 350 միլիոն ֆիլիքսին, որն որ 500,000,000ի պիտի լեցուի թէ որ պարագաները պահանջեն •

— Անճոյի յուլիս 12ին (Ն. Տ.) կը գրեն թէ, թէպէտե պատերազմը աւելի սաստկանալ սկսեց, ի վերայ այս ամենայնի Աստորիոյ մայրաքաղաքը հաշտութեան խօսակցութիւնները Կորչաքոֆ իշխանին հետ կը իրար շարունակուին •

— Յունիս 14ին ստորագրեալ գաշնագրութիւնը Աստորիոյ և Ռ. Վրան մէջ, որ օրագրոյս 470 թուոյն մէջ հրատարակուած էր, ի Վ. Էննա վաւերացուցեալ փոխանակութիւնն ալ ըստ սովորութեան եղեր է •

— Նիզակական ինքնաշարժ ֆռէկաթին հրամանատար ծովային փառքերին տղան, Վառնայի կողմը Ռուսաց հետ նախապատերազմի մը մէջ մեռաւ, որուն մարմինը Կոստանդնուպոլիս բերին, ու վիտուարական փառաւոր հանդիսիւ և խուռն բազմութեամբ թաղման յուղարկուութիւնը կատարեցին •

— Նիզակի կառավարութիւնը, Ս. Պրինս-Բապ օրագրոյն ըստին նայելով • Սանչի մէջ պահեստի նաւատորմի մը կազմել հրամայեց, ծովային տուութեան ամենէն վաղեմի լրտեսներն երկրորդ ծովային Պէրքէլին հրամանատարութեամբ •

3	Կրկնայարկ նաւ	120	Թնգանթով
2	"	"	104
2	"	"	91
3	"	"	84
1	"	"	80
1	"	"	72
1	Ֆռէկաթ	"	80
1	"	"	30
2	"	"	24

և ուրիշ զանազան փոքր նաւերէ բաղկացեալ, գրեթէ աս նաւերուն կէսը պտու սակաւոր պիտի ըլլան • Կրկնաթիւնը, կրտսեր Ս. Պրինս-Բապը, որ այս նաւատորմին կազմուիլը, մօտակայ սատակի դործողութի մը կը ճանուցանէ ի Պալդիկ •

ՔԱՆԱԾՈՒՆ ԵՄԵՐ

Չփախա, 16 Յուլիս •

Այս օրը ինքն իր թղթակիցը հետեւեալ ցաւարի լուրերը կուտայ • Ամսոյս 1ին Յոյն դերձակ երիտասարդ մը ինքզինքը թունաւորելով, 2-3 ժամու մէջ մեռաւ • Ամսոյս 2ին գիւրերուան ժամը 4-5ին ժամագործ Վարալամպօ երեւելի վաճառականին տունը 4 աւաղակ կը մտնեն տան տէրը անկողինէն պարտեղը կիծեցնեն ու բերանը գոցելով շուտ ստակ հանէ ըսելով կըսպառնան վերջապէս քովը միայն 50 մահմանով գտնուելով, և ոսկի ժամացոյց մը դանդաղ կառնեն ու խնդը 12 տեղէն շարաշար վերաւորելով կըսպանեն • Այս միջոցին Վարալամպօյին տղան իր սենեակէն կիլէ դուրս կը իջնի օդնութի խնդրելու, ետքը աւաղակները կնոք և

զաւակներուն սենեակը մտնելու կաշխատին բայց չաջողելով և անոնց վայնասունէն վախնալով կը փախչին • Կառավարութեան մարդիկները կը հասնին, բայց փոխտարին ան է կրտսեր թղթակիցին, որ դորդը բռնելու հոգ տանելուն տեղը, Վարալամպօյին սենեակը կնքելու և հաշուետուարները առնել տանելու աշխատել են • Յունաց ազգային հոգաբարձու քիւր Սիսալաքին աս բանին չգիտնալով աս ինչ է ձեր ըրածը ըսելով գանգատուի • Հետեւեալ գիւրերը 20-23 յէյլէի պարտեղ մը մանելով պարսկականին 2000 զուռուշ և լաթերը առեր փախեր են • Նմանապէս ուրիշ գիւրեր մըն ալ ուրիշ պարտեղը կողպուեր են • Կիրակի օր 12-13 տարեկան օսմանցի տղայ մը հրէի մը տուն մտնելով քանի մը բան գողցեր է, ու դուրս ելած ժամանակը բռնել են տղան • որ շտապը խոստովանելէն ետքը ըսեր է թէ • Ես այս արհիտոր 3 տարիէ որ կը գործեմ և գողցածները արծաթ ոսկի և այլն հաներ է, և Վարալամպօյին տունը մտնող գողերը կը ճաննամ ըսեր է •

— Ամսոյս 13ին կէս գիւրերուան մօտ լիւի մահալէ ըստած ֆռանկաց և յունաց թաղը ստակալ հրդեհ մը պատահեցաւ • հիւսիսային հովը սատակի կը փչէր, անոր համար կրակը մարելու շատ դժուարութիւն քաշուեցաւ, և 3 ժամ տեւեց բարեբաղդաբար բոլորովը քարաշէն տուններ գտնուելով միայն 4 տուն և 1 նպարալաճառի խոնութ սյրեցան •

— Արքիէ Պերդաճայի և Սէնէ մէնի շրջակայները աւաղակները շտաղեր են • ուստի ստեպտեպ գողութիւն և սպանութիւն պակաս չեն •

— Աստորիական Արքի շոգենաւուց ընկերութիւնը, անցեալ մայիս 31ին իր 21երորդ ընդհանուր ժողովը ըրաւ • որուն հրատարակած յայտարարութիւնէն կը տեսնուի, որ այս պատակական ընկերութիւնը օրըստօրէ մեծ յառաջողութիւններ ընկելու վրայ է, մանաւանդ երբեք իր շոգենաւերուն թիւը այսքան շատցած չէ ինչպէս 1853ին • Իր Միջոց, Դանուբի, Ս. Պրինս, Յունաստանի և Արքիական ծովուն մէջ ըրած նաւարկութեւն արտադրած գումարը 3432,291 ֆիլիքսին է ծախքերէն զատ • որոնցմէ ամենէն աւելին հանքային ածուխինն է, որ կը հասնի 1,691,782 ֆիլիքսին, և սովորական դուրմարները պահեստի դրամագլխոց և ուճիկաց աւելցրելէն ետքը, ընկերութիւնը յունուար 1ին 0/0ին 4 տոկոս հատուց իր բաժանորդացը, և մայիս 31ին այլևս 0/0ին 4 բաժին տուաւ • Այժմ անի պահեստի դրամագլխոց գումարը 880,068 ֆիլիքսին կը հասնի •

— Վիտել արժան է, որ Արքի շոգենաւուց ընկերութիւնը իր հաստատութեանն ու որանքի յառաջողութեան թէքը համար պարտաւոր է այժմ անի կատանդնուպոլիս Աստորիոյ գեսպան Պ. տը Պրինս • Հիմակուան ունեցած շոգենաւերուն թիւը 47 է • ընդամենը 7990 ձիու սյժ ունին և 23665 տակառաշափ մեծութիւն, որոնց ամենուն մէկէն արժէքը 3,010,000 ֆիլիքսին կը հասնի •

— Արքիէ կը գրեն թէ յունիս 30ին գէպ ի կէս գիւրէ ստակալ հրդեհ մը պատահեր է որն որ 10 ժամ տեւեր է, խանութներէն և մթերանոցներէն զատ 12 փոքրիկ եկեղեցիներ, մէկ միլիթ և 900 տուն հոյ ծաղակ եղեր են •

— Մատրիտէն յուլիս 3ին կը գրեն թէ ասոր տամբները յունիս 30ին բոլորովին յաղթուեցան, և մնացածները Մատրիտի շրջակայները կը գտնուին, շատ արշտոնատարներ և զօրքեր հրնազանդիլ կուզեն, որոնցմէ շատ ալ փախըտակներ կան •

— Յունիս 2ին Սիկափորէն մեր յարգով թղթակիցը կը գրէ թէ, մայիսի վերջի օրերը արիւնահեղ կռիւներ պատահեր է ի Սիկափոր մահմանդ Ղէնացի բնակաց մէջ, այս պատճառաւ շատ երկիւղ կրեր են վաճառականները այժմ խաղաղացած է թէ և, բայց վերջը ինչպէս ըլլաւ չէ չէմ գիտեր կրտսեր •

— Վաղաքիս պահապան զօրաց մէջ անցեալ շաբթու քանի մը մարդայոյն բռնուող և մեռնողներ ըլլալով քաղաքը քառասունօրեայ դգու շաբթանց մէջ գրուեցաւ •

— Ահաւարի գլխաւոր տղարանաց գիւրերը • Արիւն 122, և այս տարուան հունիսը քիչ է • Պալեամպօլի Սետաքս 154-155 • այս տարի առատ է • Տորոն 240-255 • Փալամաւ 65-70 • Խահլէ 800-820 • Շաքար 225-240 • Չէթ 300 • Յորեան 28-32, և գարին 14-15 զուրուշ են, արմատաց հունիսը առատ է այս տարի •

ԾԱՆՈԹԱՆԻՍ

Տրամախո-Թիւն Վալդիւրէն և Թարիւրէն • Ի յարգը Երամ աղայէ Կիւզլուլեան • Տպեալ ի կոստանդնուպոլիս 1852 •

Այս գիրքը ութնուոր գիրքով է և կըստղանայ գրեթէ 400 երեւելի բայց ի զանազան խօսակցութիւններէն պիտանի թիւութեամբ լեցուց, որոց թիւը իննուհին հասի կը հասնին, համառօտ բառաւորն մը ևս գրուած է գրքին սկիզբը գաղղիական և հայերէն 400ի չափ խիտ գործածական բառեր կը պարունակէ, խօսակցութեանց նմանապէս բառերուն առջև թարգմանի գրեթէ նշանակութիւնները գրուելէն զատ գաղղիական գիրքով ևս տեսնող տրատարութիւնը գրուած է • Այս բոլորատրութիւններէն յայտնի կը տեսնուի որ յիշեալ գիրքը խիտ օգտակար է, թէ թարգմանի ուսանող գաղղիական օտարականաց, թէ գաղղիական ուսանող օսմանցի երիտասարդաց •

Վերջաճախ ի կոստանդնուպոլիս Պիլալեանի պարտի Աւետիսին գրատուը որ ի Սետաքս, փաշայ խանն • Ի զմիջ Սեւալուայ գրատուը, գիրք 53 զուռուշ է •

ԲԺՇԿՈՒԹԻՒՆ ԱՄԵՆԵՑՈՒՆ



Սղեռնի Թովմայէ Հնուրէն •

Հաղաւոր անձինք ամէն ազգէ կրնան վկայել այս օգտակար գիրքը զօրութիւնները և յատկութիւնները, և ապացուցանել ի պահանջէ հարկին, թէ ասոր գործածութեամբ մարդոյս մարմինը և անդամները առողջութիւնը բաւական, յետ ի զուր գործածելու ուրիշ զանազան դեղեր • Կրնայ մէկը խիտ յայտնապէս համոզուիլ այս սպեղանիին սրանչէր բժշկութեանցը վրայ, եթէ կարդալու ըլլայ օրագիրները, որոնք այս բաները անդադար կը պատմեն շատ տարիներէ հետեւ • Այս պատմութեանց շատերը այնքան զարմանալի են, մինչև ուր բժիշկներէն ամենէն հուշակալները կ'ապշտեցնեն • Որչափ մարդիկ այս գիրքոյն և ազդու դեղով վերստին ստացան գործածութեան իրենց բազկաց և սրտագաց (պաճագ), գինի շատ ժամանակ նայուելու հիւանդանոցաց մէջ, ուր հարկ կ'ըլլար զինքն իրենց անբաժնի մէկը կորել տալու • Անոնցմէ շատերը այս ապագանաւորները կ'ապշտեցնեն իրենց ծածկելով • որ ըլլայ թէ ևս առաւել ցաւայի գործողութեան մը ենթակայ ըլլան, կատարեալապէս բժշկեցան յիշեալ անգին դեղը գործածելով • Այս բժշկեալ մարդիկներէն շատերը երախտագիտութեան վերամեանը զգացմունքէ շարժեալ, վկայեցին և հաստատեցին այս բարեբաղդ վախճանները առաջի քաղաքայէտ Լորտի և ուրիշ պաշտօնատարաց լուսնի, իրենց վկայութեանցը մեծագոյն հաստատութիւն տալու համար •

Ոչ որ պիտի չուսահատուի իւր հիւանդ կացութեանը վրայ, եթէ բաւական վստահութիւն ունենար ինամօք փորձելու այս դեղը և շարունակելու այս դրաման, որչափ ժամանակ որ իւր անիւնը բնութիւնը կը պահանջէ • Իւր պահանջ հաստատուն վախճանը պիտի ապացուցանէ թէ, իւր և իւր ամենայն ինչ բժշկութեան •

Այս սպեղանիին յատկապէս հետեւեալ հիւանդութեանց համար օգտակար է •

- Վիտալիտի սրտանցները •
- Դիւերուն հիւանդութիւնները •
- Խաղաւարտ մորմոյն (բիւսթիւ) •
- Խաճուածք մեղաց և փոքրիկ ծանծերուն •
- Հաղաւորաց բորոտութիւնը • Ճեղքուածք ձեռաց •
- Բաղցկեղ (շիքիֆէնէ) • Ցաւք որովայնի •
- Չմեռնահարութիւնը (թաղուք կեօղի) •
- Ընդարձակութեան երակաց և սրտիկց (պալտը) •
- Կողմք ուղից • Ուռուցք մանագ •
- Չորոգութիւն (սրագա) • Օձիկ (երանդրդ իւլթի) •
- Ուռուցք որովայնի, կողից և երաստանի •
- Խնայաւորութիւն (շիքիֆէ) • Բորոտութիւն •
- Երկիւմանածեւութիւն (նէֆրիթ) •
- Ցաւք երեսաց, կողից և անդամաց •
- Տեւատեւութիւն (մայաւը) •
- Յօդացաւորութիւն (բիւսթիւ) •
- Խոյլ պարանոցի (սոսնա) • Ուրուլութիւն (լէփը) •
- Արեան ապակաւութիւն պատճառեալ դէպք •
- Արեւէն պատճառեալ վերք •
- Գոնջութիւն գլխոյ (գէլ) և ուրիշ տեղաց •
- Պալտը (շէ) • Փողացաւք •
- Վիտալիտութիւն • Աւաղաւորութիւն •
- Չղացաւորական սաստիկ դէպք •
- Ուռուցք (կիւմէօր) • Կեղք (կիւլէ) •
- Վիտալիտեան զանազան անոթ, որպիսի են վերք, պալտը (շէ) և քաղցկեղ •
- Այս սպեղանիին կը վաճառի ի լոտոն միտոր Թովմա Հոյունէյին գործատունը, որ է ՍԵՒԷՄ քաղաք թաղութիւն 244 •
- Իսկ օտար երկիրները գլխաւոր դեղավաճառաց քով կը գտնուի Ի զմիջ մէջ սինեօր Սեմէլօ Ճիւսփիյի դեղավաճառի խանութը կը ծախ ուի • որ ի Դուսնկաց թաղը Սուլթանիէ Զապիսի ըստած փողոցը թիւ 30 •
- Այս սպեղանիին ամանները զանազան մեծութեամբ են • և կը վաճառին 8-21 և 52 զուռուշ իւրաքանչիւրը, և ամէն մէկուն մէջ տպեալ ծանուցագիր մը կայ, որ յիշեալ սպեղանիին գործածութեան վրայօք մանրամասն տեղեկութիւններ կուտայ, գաղղիական, անգղիական և յունական լեզուաւ •

Հրատարակիչ և տէր լեզարոյս • Ղալա Վ. Պալապարեան •